

**ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի նոյեմբերի 3-ի 92/91/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման բարելավման համար նվազագույն պահանջների մասին (տասնմեկերորդ անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը կազմվել է Հանքային և արդյունահանող արդյունաբերությունում անվտանգության ու առողջության հարցերով հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է ընդունի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումները խրախուսելուն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով,

քանի որ համաձայն այդ հոդվածի՝ պետք է խուսափել նման հրահանգներով վարչական, ֆինանսական և իրավական այնպիսի սահմանափակումներ սահմանելուց, որոնք հետ կպահեն փոքր և միջին ձեռնարկություններ ստեղծելուց ու զարգացնելուց,

քանի որ աշխատավայրում աշխատողների անվտանգության, հիգիենայի և առողջության բարելավումը մի նպատակ է, որը չպետք է ստորադասվի զուտ տնտեսական նկատառումներին,

քանի որ աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների վերաբերյալ Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 30-ի 89/654/ԵՏՀ հրահանգը (առաջին անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի (4) 16 (1) հոդվածի իմաստով, կիրառելի չէ արդյունահանող արդյունաբերության վրա

քանի որ հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման առավել բարձր ստանդարտ

երաշխավորելու համար նախատեսված նվազագույն պահանջների հետ համապատասխանությունը էական նշանակություն ունի աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու հարցում,

քանի որ հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունը ենթադրում է գործունեության ոլորտ, որտեղ առկա է աշխատողների՝ առանձնակի բարձր մակարդակի վտանգի առաջացման ռիսկի ենթարկվելու հավանականություն,

քանի որ սույն Հրահանգը «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խրախուսելուն ուղղված միջոցների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի (5) 16 (1) հոդվածում նշված առանձին հրահանգ է, և քանի որ, հետևաբար, նշված հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերության նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

քանի որ սույն Հրահանգը գործնականում նպաստում է ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## **ԲԱԺԻՆ 1**

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան**

1. Սույն Հրահանգով, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով տասնմեկերորդ առանձին հրահանգն է, սահմանվում են հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության և առողջության նվազագույն պահանջները, ինչպես սահմանված է 2 (ա) հոդվածում:

2. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 1-ին պարբերության մեջ նշված բնագավառում՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

## Հոդված 2

### Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով՝

ա) հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերություն նշանակում է բոլոր այն արդյունաբերությունը, որտեղ իրականացնում են

– հորատանցքերով հորատման միջոցով հանքային նյութերի արդյունահանում՝ բառի խիստ նեղ իմաստով, և (կամ),

ՊՏ թիվ L 183, 29.06.1989թ., էջ 1:

– որոնում նման արդյունահանման նպատակով,

և (կամ)

– արդյունահանված նյութերի պատրաստումը վաճառքի համար՝ բացառությամբ արդյունահանված նյութերի մշակման գործողությունների,

բ) աշխատավայր նշանակում է ամբողջ այն տարածքը, որը նախատեսված է աշխատակայանները տեղավորելու համար, որոնք առնչվում են հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերության անմիջական և լրացուցիչ գործողություններին ու սարքավորումներին, այդ թվում նախատեսված լինելու դեպքում՝ կացարանին, որից կարող են օգտվել աշխատողներն իրենց աշխատանքի համատեքստում:

## ԲԱԺԻՆ II

### ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Հոդված 3

##### Ընդհանուր պարտավորությունները

1. Աշխատողների անվտանգությունն ու առողջությունը երաշխավորելու նպատակով, գործատուն պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ

ա) աշխատավայրերը նախագծվեն, կառուցվեն, հագեցվեն սարքավորումներով, շահագործման հանձնվեն, գործեն և պահպանվեն այնպես, որ աշխատողները կարողանան իրենց վերապահված աշխատանքը կատարել առանց իրենց և (կամ) այլ աշխատողների անվտանգությունը և (կամ) առողջությունը վտանգելու,

բ) աշխատավայրերում աշխատանքը, երբ աշխատողները ներկա են, տեղի ունենա պատասխանատու անձի վերահսկողության ներքո,

գ) վտանգի առաջացման հատուկ ռիսկ պարունակող աշխատանքը վստահվի միայն իրավասու աշխատակազմին և իրականացվի տրված ցուցումների համաձայն,

դ) անվտանգության բոլոր ցուցումները հասկանալի լինեն տվյալ բոլոր աշխատողներին,

ե) տրամադրվեն առաջին օգնության համապատասխան հարմարանքներ,

զ) հորատման անվտանգությունը ապահովող ցանկացած միջոցառում իրականացվի պարբերական ժամանակահատվածներով:

2. Գործատուն ապահովում է, որ անվտանգության ու առողջության հարցերին վերաբերող փաստաթուղթը, այսուհետ՝ «անվտանգության և առողջության փաստաթուղթ», որը ներառում է 89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված համապատասխան պահանջները, կազմվի և պարբերաբար թարմացվի: Անվտանգության և առողջության փաստաթուղթում, մասնավորապես, ցույց է տրվում, որ՝ –բացահայտվել և գնահատվել են վտանգի առաջացման ռիսկերը, որոնց ենթարկվել են աշխատողներն աշխատավայրում,

–համարժեք միջոցներ են ձեռնարկվելու՝ սույն Հրահանգի նպատակներին հասնելու համար,

–աշխատավայրի և սարքավորումների նախագծումը, օգտագործումը և պահպանությունն ապահով կերպով է իրականացվում,

Անվտանգության և առողջության փաստաթուղթը պետք է մշակվի մինչև աշխատանքն սկսելը և վերանայվի, եթե աշխատավայրը հիմնական փոփոխությունների է ենթարկվել, ընդարձակվել է կամ այլ կերպ վերափոխվել:

3. Երբ մի քանի ձեռնարկությունների աշխատողներ ներկա են միևնույն աշխատավայրում, յուրաքանչյուր աշխատող պատասխանատվություն է կրում իր հսկողության տակ գտնվող բոլոր հարցերի համար:

Գործատուն, ով ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն պատասխանատու է աշխատավայրի համար, համակարգում է աշխատողների անվտանգությանը և առողջությանը վերաբերող բոլոր միջոցների իրականացումն ու իր անվտանգության և առողջության փաստաթղթում նշում է այդ համակարգման նպատակը և այն իրագործելու միջոցներն ու ընթացակարգերը:

Համակարգումը չի ազդում առանձին գործատուների պատասխանատվության վրա, ինչպես նախատեսված է 89/391/ԵՏՀ հրահանգով:

4. Գործատուն անհապաղ զեկուցում է իրավասու մարմիններին ցանկացած լուրջ և (կամ) մահվան ելքով դժբախտ պատահարների ու լուրջ վտանգ ներկայացնող իրավիճակների մասին:

Գործատուն անհրաժեշտության դեպքում թարմացնում է անվտանգության և առողջության փաստաթուղթը՝ գրանցելով ձեռնարկված միջոցները՝ ցանկացած կրկնությունից խուսափելու նպատակով:

#### *Հոդված 4*

### **Պաշտպանությունը հրդեհից, պայթյուններից և առողջությունը վտանգող միջավայրերից**

Գործատուն ձեռնարկում է այնպիսի միջոցներ և նախազգուշական միջոցներ, որոնք համապատասխանում են իրականացվող գործողության բնույթին՝ –հրդեհների և պայթյունների առաջացումից ու տարածումից խուսափելու, դրանք հայտնաբերելու և դրանց առաջացման ու տարածման դեմ պայքարելու համար

և

–պայթյունավտանգ և (կամ) առողջությունը վտանգող միջավայրերի առաջացումը կանխարգելելու համար:

#### *Հոդված 5*

##### **Փախուստի և փրկարարական միջոցներ**

Գործատուն տրամադրում ու պահպանում է փախուստի և փրկարարական համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար աշխատողների համապատասխան հնարավորությունները՝ վտանգի դեպքում աշխատավայրերն անհապաղ ու ապահով լքելու համար:

#### *Հոդված 6*

##### **Հաղորդակցություն, զգուշացում և ահազանգող համակարգեր**

Գործատուն ձեռնարկում է պահանջվող միջոցները՝ անհրաժեշտ զգուշացման և հաղորդակցման այլ համակարգերի տրամադրման համար՝ հնարավորություն տալու համար, անհրաժեշտության դեպքում, օժանդակության, փախուստի և փրկարարական գործողություններն անմիջապես սկսելու համար:

#### *Հոդված 7*

##### **Աշխատողներին տեղեկացնելը**

1. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10–րդ հոդվածի դրույթները՝ աշխատողներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին պետք է տեղեկացնել աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման համար ձեռնարկվող բոլոր, մասնավորապես՝ 3–6–րդ հոդվածների իրականացմանը վերաբերող միջոցների մասին:

2. Տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի տվյալ աշխատողների համար:

## Հոդված 8

### Առողջության վերահսկողություն

1. Աշխատողների կողմից առողջության այնպիսի պատշաճ վերահսկողություն ստանալն ապահովելու համար, որը համապատասխան է վտանգի առաջացման այն ռիսկերին, որոնց նրանք ենթարկվում են աշխատավայրում, միջոցներ պետք է ներմուծվեն՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:
2. 1-ին պարբերությամբ նախատեսված միջոցները պետք է այնպիսին լինեն, որ յուրաքանչյուր աշխատող իրավունք ունենա անցնելու կամ անցնի առողջության վերահսկողություն նախքան 2-րդ հոդվածով նախատեսված գործողությունների մասով նրանց պարտականությունները վերապահելը և դրանից հետո պարբերական ժամանակահատվածներով:
3. Առողջության վերահսկողությունը կարող է տրամադրվել որպես ազգային առողջապահական համակարգի մաս:

## Հոդված 9

### Աշխատողների հետ խորհրդակցությունը և աշխատողների մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունը կամ նրանց մասնակցությունը սույն Հրահանգով կարգավորվող խնդիրների վերաբերյալ տեղի է ունենում 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն:

## Հոդված 10

### Անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջներ

1. Աշխատավայրերը, որոնք օգտագործվում են առաջին անգամ 12 (1) հոդվածում նշված կարգով, սույն Հրահանգը գործողության մեջ դնելուց հետո, պետք է բավարարեն Հավելվածում նշված անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները:
2. Այն աշխատավայրերը, որոնք արդեն օգտագործվում են մինչև 12 (1) հոդվածում նշված կարգով սույն Հրահանգը գործողության մեջ դնելը, պետք է հնարավորինս շուտ և

ամենաուշը նշված ժամկետից հինգ տարի հետո բավարարեն հավելվածում նշված անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները:

3. Երբ աշխատավայրերը ենթարկվում են փոփոխությունների, ընդարձակումների և (կամ) վերափոխումների 12 (1) հոդվածում նշված կարգով սույն Հրահանգը գործողության մեջ դնելուց հետո, ապա գործատուն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ այդ փոփոխությունները, ընդարձակումները և (կամ) վերափոխումներն իրականացվեն հավելվածում սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան:

### **ԲԱԺԻՆ III**

#### **ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

##### *Հոդված 11*

#### **Հավելվածներում կատարվող ճշգրտումները**

Հավելվածներում կատարվող զուտ տեխնիկական բնույթի ճշգրտումներ, որոնք համահունչ են՝

– հրահանգների ընդունմանը հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերության վերաբերյալ տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման ոլորտում

և (կամ)

– տեխնիկական առաջընթացին, միջազգային կանոնակարգերում կամ տեխնիկական մասնագրերում կատարված փոփոխություններին և հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերության վերաբերյալ նոր դիտարկումներին,

ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:



## Հոդված 12

### Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան դրա ընդունումից 24 ամիս հետո: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությամբ նախատեսված միջոցները, ապա դրանք պետք է սույն Հրահանգին կատարված հղում պարունակեն կամ ուղեկցվեն նման հղումով դրանց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում ազգային իրավունքի տեքստերը, որոնք արդեն ընդունվել են կամ պետք է ընդունվեն սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

4. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրարկման վերաբերյալ հաշվետվություն են տրամադրում Հանձնաժողովին՝ ներկայացնելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին և Հանքային և արդյունահանող արդյունաբերությունում անվտանգության ու առողջության հարցերով հանձնաժողովին և Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության ապահովման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

## Հոդված 13

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1992 թվականի նոյեմբերի 3-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Դենտոն

1) ՊՏ թիվ C 32, 07.02.1991թ., էջ 7:

2) ՊՏ թիվ C 280, 28.10.1991թ., էջ 79 և ՊՏ թիվ C 241, 21.09.1992թ., էջ 88:

3) ՊՏ թիվ C 191, 22.07.1991թ., էջ 34:

4) ՊՏ թիվ L 393, 30.12.1989թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ

**ՀՐԱՀԱՆԳԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Նախնական ծանոթագրություն

Սույն հավելվածում սահմանված պարտավորությունները կիրառվում են, եթե դա պահանջվում է՝ ելնելով աշխատավայրի, գործունեության առանձնահատկություններից, հանգամանքներից կամ վտանգի առաջացման հատուկ ռիսկերից:

**ՄԱՍ Ա**

**Ընդհանուր նվազագույն պահանջները, որոնք կիրառվում են ծովեզերքին մոտ և  
ծովեզերքից հեռու գոտիների նկատմամբ**

1. Կայունությունը և հուսալիությունը

Աշխատավայրերը պետք է նախագծվեն, կառուցվեն, վերազինվեն, գործեն, վերահսկվեն և պահպանվեն այնպես, որ դիմակայեն շրջակա միջավայրի ենթադրյալ ազդեցությանը: Դրանք պետք է ունենան իրենց օգտագործման բնույթին համապատասխան կառուցվածք և ամրություն:

2. Կազմակերպում և վերահսկողություն

2.1. Աշխատավայրի կազմակերպումը

2.1.1. Աշխատավայրերը պետք է կազմակերպվեն այնպես, որ վտանգներից համարժեք պաշտպանություն ապահովեն: Դրանք պետք է մաքուր պահվեն՝ հեռացնելով կամ վերահսկելով ցանկացած վտանգավոր նյութ կամ թափոն՝ աշխատողների առողջությունը չվտանգելու և անվտանգությունը չվնասելու համար:

2.1.2. Աշխատակայանները պետք է նախագծվեն և կառուցվեն երգոնոմիկական սկզբունքների համաձայն՝ հաշվի առնելով աշխատողների կողմից իրենց աշխատակայաններում իրականացվող գործառնությունները կատարելու անհրաժեշտությունը:

2.1.3. Այն տարածքները, որտեղ առկա է հատուկ վտանգ, պետք է հստակ տարանջատված լինեն և դրանցում պետք է զգուշացման նշաններ տեղադրվեն:

## 2.2. Պատասխանատու անձը

Պատասխանատու այն անձը, ով հմտություններ և իրավասություն ունի այս պարտականությունը կատարելու համար՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, և ով նշանակվել է գործատուի կողմից, պետք է մշտապես պատասխանատվություն կրի յուրաքանչյուր աշխատավայրի համար, երբ ներկա են աշխատողները:

Աշխատողը կարող է անձամբ պատասխանատվություն ստանձնել աշխատավայրի համար առաջին պարբերությամբ նախատեսված կարգով, եթե նա ունի այն հմտություններն ու իրավասությունը, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

## 2.3. Վերահսկողությունը

Բոլոր ձեռնարկված գործողությունների ժամանակ աշխատողների անվտանգության ու առողջության պահպանումն ապահովելու համար, պետք է անհրաժեշտ վերահսկողություն իրականացնեն այս պարտավորությունն իրականացնելու համար հմտություններ և իրավասություն ունեցող անձինք, ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, ովքեր նշանակվել են գործատուի կողմից կամ նրա անունից և գործում են ի շահ նրա:

Գործատուն կարող է անձամբ ստանձնել առաջին ենթապարբերությամբ նախատեսված՝ վերահսկողություն իրականացնելու պարտավորությունը, եթե նա ունի այն հմտություններն ու իրավասությունը, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

## 2.4. Իրավասու աշխատողներ

Երբ աշխատողները ներկա են ցանկացած աշխատավայրում, պետք է լինեն բավարար թվով աշխատողներ՝ համապատասխան հմտություններով, փորձառությամբ և պատրաստամբ, որպեսզի կատարեն իրենց տրված հանձնարարությունները:

## 2.5. Տեղեկատվություն, ցուցումներ և պատրաստում

Աշխատողներին պետք է տրամադրվի անհրաժեշտ տեղեկատվություն, ցուցումներ, պատրաստում և վերապատրաստում՝ նրանց առողջությունը և անվտանգությունն ապահովելու համար: Գործատուն պետք է ապահովի, որ աշխատողներին տրվեն

հասկանալի ցուցումներ այնպես, որ նրանց կամ այլ աշխատողների անվտանգությունը չվնասվի, իսկ առողջությունը՝ չվտանգվի:

## 2.6. Գրավոր ցուցումներ

Յուրաքանչյուր աշխատավայրի համար մշակվում են գրավոր ցուցումներ, որոնցով սահմանվում են կանոններ, որոնց պետք է հետևել՝ աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու և սարքավորումներն անվտանգ օգտագործելու համար:

Դա պետք է արտակարգ դեպքերում սարքավորումների օգտագործման և աշխատավայրում կամ դրան կից տարածքում արտակարգ իրավիճակներում ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն ներառի:

## 2.7. Աշխատանքային անվտանգ մեթոդներ

Յուրաքանչյուր աշխատավայրում կամ յուրաքանչյուր գործողության առնչությամբ պետք է կիրառվեն աշխատանքային անվտանգ մեթոդներ:

## 2.8. Աշխատանքային թույլտվություն

Անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, պետք է ներմուծվի աշխատանքային թույլտվությունների համակարգ՝ իրականացնելու համար և՛ վտանգավոր գործողություններ, և՛ սովորաբար դժվարություններ չառաջացնող այնպիսի գործողություններ, որոնք փոխկապված են լուրջ վնասներ պատճառող այլ գործողությունների հետ:

Աշխատանքային թույլտվությունները պետք է տրվեն այն անձի կողմից, ով պատասխանատու է՝ նախքան աշխատանքն սկսելը և դրանցով պետք է սահմանվեն այն պայմանները, որոնք պետք է բավարարել և նախազգուշական միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն աշխատանքից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո: 2.9. Անվտանգության և առողջության միջոցառումների պարբերաբար վերանայում

Գործատուն պետք է ապահովի, որ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար ձեռնարկվող միջոցները՝ ներառյալ անվտանգության և առողջության հարցերի կառավարման համակարգը, պարբերաբար վերանայվեն՝ ապահովելու համար համապատասխանությունը սույն Հրահանգին:

## 3. Մեխանիկական կամ էլեկտրական սարքավորումներ և կայան

### 3.1. Ընդհանուր դրույթներ

Մեխանիկական և էլեկտրական սարքավորումների ընտրությունը, տեղադրումը, շահագործումը, գործարկումը և պահպանությունը պետք է տեղի ունենա՝ պատշաճ կերպով հաշվի առնելով աշխատողների անվտանգությունը և առողջությունը, սույն Հրահանգի և 89/392/ԵՏՀ (¹) և 89/655/ԵՏՀ (²) հրահանգների մյուս դրույթները:

Եթե տեղադրվել են այն տարածքում, որտեղ հավանաբար հրդեհի կամ պայթյունի առաջացման ռիսկ գոյություն ունի՝ գազի, գոլորշու կամ ցնդող հեղուկ նյութերի բռնկումից, ապա դրանք պետք է հարմարեցված լինեն տվյալ տարածքում օգտագործելու համար:

Սարքավորումը պետք է, անհրաժեշտության դեպքում, հարմարեցված լինի համապատասխան պաշտպանիչ սարքերին և խափանման ու անվտանգության համակարգերին: 3.2. Հատուկ դրույթներ

Մեխանիկական սարքավորումները և կայանը պետք է ունենան պատշաճ հզորություն՝ առանց արտոնագրային թերությունների և համապատասխան լինեն իրենց նպատակային նշանակությանը:

Էլեկտրական սարքավորումները և կայանը պետք է ունենան բավարար չափեր և հզորություն՝ իրենց նպատակային նշանակությանը համապատասխան:

#### 4. Պահպանումը

##### 4.1. Ընդհանուր պահպանություն

Պետք է ստեղծվի հարմարեցված համակարգ, որը կնախատեսի համակարգված ուսումնասիրություն, պահպանություն և, անհրաժեշտության դեպքում, մեխանիկական և էլեկտրական սարքավորումների ու կայանի փորձարկում:

Կայանի և սարքավորման ցանկացած մասի պահպանությունը, ուսումնասիրությունը և փորձարկումը պետք է իրականացվի իրավասու անձի կողմից:

Ուսումնասիրությունների և փորձարկումների վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ և համապատասխան կերպով պահպանվեն:

##### 4.2. Անվտանգության սարքերի պահպանություն

Անվտանգության համապատասխան սարքերը մշտապես պետք է պահպանվեն՝ գործածության համար պատրաստ և բարվոք վիճակում: Պահպանությունը պետք է իրականացվի՝ պատշաճորեն հաշվի առնելով կատարվող գործառնությունները:

## 5. Հորերի շահագործման հսկողություն

Հորերի շահագործման հսկողության համապատասխան սարքավորում պետք է տրամադրվի հորատանցքերի հետ կապված գործողությունների ժամանակ օգտագործելու համար՝ պայթյուններից պաշտպանելու նպատակով: Նման սարքավորումների տեղաբաշխման ժամանակ պետք է հաշվի առնել շահագործվող հորերի և իրականացվող գործառնությունների գերիշխող պայմանները: 6. Պաշտպանություն վնասակար միջավայրերից և պայթյունի վտանգի առաջացման ռիսկերից

6.1. Միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ միջավայրում վնասակար և (կամ) հնարավոր պայթուցիկ նյութերի առկայությունը գնահատելու և նման նյութերի խտությունը չափելու համար:

(<sup>1</sup>) ՊՏ թիվ L 183, 29.06. 1989թ., էջ 9: 91/368/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 198, 22.07.1991թ., էջ 16):

(<sup>2</sup>) ՊՏ թիվ L 393, 30.12.1989թ., էջ 13:

Անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում պետք է տրամադրվեն դիտանցման սարքերը, որոնք մեխանիկորեն կամ շարունակաբար չափում են գազի խտությունը որոշակի վայրերում, մեխանիկական ազդանշանները և սարքերը, որոնք մեխանիկորեն անջատում են հոսանքը էլեկտրական սարքավորումներից և ներքին այրման շարժիչներից:

Երբ տրամադրվում են մեխանիկական չափումներ, չափվող մեծությունները պետք է գրանցվեն և պահպանվեն, ինչպես նախատեսված է անվտանգության և առողջության փաստաթղթում:

## 6.2. Պաշտպանություն վնասակար միջավայրերից

6.2.1. Երբ միջավայրում կուտակվում են կամ կարող են կուտակվել վնասակար նյութեր, համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ ապահովելու համար դրանց հավաքումն աղբյուրի մոտ և հեռացումը:

Համակարգը պետք է կարողանա նման վտանգավոր միջավայրը վնասագերծել այնպես, որ աշխատողները վտանգի առաջացման ռիսկի չենթարկվեն:

6.2.2. Չհակասելով 89/656/ԵՏՀ (<sup>1</sup>) հրահանգին՝ համապատասխան և արդյունավետ շնչառական ու վերակենդանացման սարքավորումները պետք է հասանելի լինեն այն

վայրերում, որտեղ աշխատողները պետք է ենթարկվեն առողջության համար վնասակար միջավայրի ազդեցությանը:

Աշխատավայրում նման դեպքում պետք է նման սարքավորումներն օգտագործելու համար ներկա գտնվեն բավարար թվով վերապատրաստված աշխատակիցներ:

Սարքավորումները պետք է պատշաճորեն պահվեն և պահպանվեն:

6.2.3. Եթե միջավայրում առկա են կամ կարող են լինել ծծմբաջրածին կամ այլ թունավոր գազեր, ապա իրավասու մարմինների տիրապետման ներքո պետք է լինի պաշտպանության վերաբերյալ պլան, որում մանրամասն նշվում են պաշտպանության սարքավորումները և ձեռնարկված կանխարգելիչ միջոցները:

6.3. Պայթյունի առաջացման ռիսկերի կանխարգելում

6.3.1. Պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պայթյունավտանգ միջավայրերի առաջացումը և կուտակումը կանխելու համար:

6.3.2. Այն տարածքներում, որտեղ առկա է պայթյունի առաջացման ռիսկ, պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պայթուցիկ միջավայրերի բռնկումը կանխելու համար:

6.3.3. Պետք է պատրաստվի պայթյունի կանխարգելման պլան, որում մանրամասն նշվում են անհրաժեշտ սարքավորումները և միջոցները:

7. Վթարային անցուղիները և ելքերը

7.1. Վթարային անցուղիները և ելքերը պետք է մաքուր պահվեն և ուղղակիորեն տանեն դեպի բացօթյա կամ ապահով տարածություն, ապահով հավաքակետ կամ ապահով տարհանման կետ:

7.2. Վտանգի առկայության դեպքում աշխատողները պետք է հնարավորություն ունենան արագ և հնարավորինս անվտանգ տարհանվելու բոլոր աշխատակայաններից:

7.3. Վթարային անցուղիների և ելքերի թիվը, բաշխվածությունը և չափերը կախված են աշխատավայրերի օգտագործումից, սարքավորումներից և չափերից ու ներկա գտնվող մարդկանց առավելագույն թվից:



Կացարանը և հանգստի սենյակները պետք է ունենան առնվազն երկու առանձին պահեստային ելք, որոնք տեղակայված են իրարից հնարավորինս անջատ և որոնք տանում են ապահով տարածք, ապահով հավաքակետ կամ ապահով տարհանման կետ:

7.4. Վթարային դռները պետք է դեպի դուրս բացվեն կամ, անհնարինության դեպքում, լինեն սահող դռներ:

Վթարային դռները չպետք է կողավեն կամ փակվեն այնպես, որ որևէ անձ, ում համար կարող է պահանջվել դրանց օգտագործումն արտակարգ իրավիճակում, չկարողանա դրանք հեշտությամբ և անհապաղ բացել:

7.5. Հատուկ վթարային անցուղիները և ելքերը պետք է նշվեն 92/58/ԵՏՀ հրահանգը <sup>(2)</sup> օրենքի փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով:

7.6. Վթարային դռները չպետք է կողավեն:

Վթարային անցուղիները և ելքերը, ինչպես նաև դրանց միացող երթուղիները և դռները պետք է ազատ լինեն խոչընդոտներից այնպես, որ դրանք հնարավոր լինի ցանկացած ժամանակ անարգել օգտագործել:

7.7. Հոսանքազրկման դեպքում լուսավորություն պահանջող վթարային անցուղիները և ելքերը պետք է ապահովվեն բավարար հզորության լուսավորությամբ:

<sup>1)</sup> ՊՏ թիվ L 393, 30.12.1989թ., էջ 18: .

<sup>2)</sup> ՊՏ թիվ L 245, 26.08.1992թ., էջ 23:

## 8. Փակ տարածությամբ աշխատավայրի օդափոխությունը

8.1. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար, որ փակ տարածությամբ աշխատավայրում առկա լինի բավարար ծավալով մաքուր օդ՝ հաշվի առնելով կիրառվող աշխատանքային մեթոդները և աշխատողների նկատմամբ սահմանված ֆիզիկական պահանջները:

Արհեստական օդափոխության համակարգի կիրառման դեպքում պետք է այն պահվի սարքին վիճակում:

Խափանման ցանկացած դեպքի մասին պետք է նշվի հսկողության համակարգի միջոցով, եթե դա անհրաժեշտ է՝ աշխատողների առողջությունն ապահովելու համար:

8.2. Օդակարգավորիչների կամ մեխանիկական օդափոխության սարքավորումների օգտագործման դեպքում դրանք պետք է գործեն այնպես, որ աշխատողները անհարմարություն ստեղծող միջանցիկ քամիների ազդեցությանը չենթարկվեն:

Օդի աղտոտման միջոցով աշխատողների անվտանգության և առողջության համար անմիջական վտանգ ստեղծող թափոնները կամ աղբը պետք է անմիջապես հեռացվեն:

## 9. Սենյակային ջերմաստիճանը

9.1.Ջերմաստիճանը սենյակներում աշխատանքային ժամերին պետք է բավարար լինի մարդու համար՝ հաշվի առնելով կիրառվող աշխատանքային մեթոդները և աշխատողների նկատմամբ սահմանված ֆիզիկական պահանջները:

9.2. Ջերմաստիճանը հանգստի տարածքներում, հերթապահ անձնակազմի համար նախատեսված սենյակներում, սանհանգույցներում, ճաշարաններում և առաջին օգնության սենյակներում պետք է համապատասխանի նշված տարածքների օգտագործման առանձնակի նպատակներին:

9.3. Պետք է թույլատրվի պատուհանների, լուսանցքների և ապակյա միջնապատերի միջով աշխատավայր ներթափանցող արևի՝ սահմանազանցող լուսային էֆեկտներից խուսափելը՝ հաշվի առնելով աշխատանքի և աշխատավայրի բնույթը:

## 10. Սենյակների հատակները, պատերը, առաստաղները և տանիքները

10.1.Աշխատավայրերի հատակները պետք է զերծ լինեն վտանգավոր ուռուցիկություններից, փոսերից կամ թեքություններից և պետք է լինեն ամրացված, կայուն ու չլինեն սայթաքուն:

Աշխատակայան ունեցող աշխատավայրերը պետք է համապատասխանաբար ջերմամեկուսացված լինեն՝ հաշվի առնելով ընդգրկված ձեռնարկության տեսակը և աշխատողների ֆիզիկական գործունեությունը:

10.2. Սենյակներում հատակների, պատերի և առաստաղների մակերեսները պետք է այնպիսին լինեն, որ հնարավոր լինի սահմանված հիգիենիկ նորմերին համապատասխան մաքրել կամ նորացնել դրանք:

10.3. Սենյակներում կամ աշխատավայրերի և երթուղիների մոտակայքում գտնվող թափանցիկ կամ կիսաթափանցիկ պատերը, մասնավորապես՝ ամբողջովին ապակյա միջնապատերը, պետք է հստակ նշում պարունակեն, պատրաստված լինեն անվտանգ նյութերից կամ պաշտպանված լինեն նման վայրից կամ երթուղիներից՝ աշխատողների

կողմից պատերին բախվելը կամ, պատերը կոտրվելու դեպքում, աշխատողների կողմից վնասվածքներ ստանալը կանխելու համար: 10.4. Չպետք է մուտք թույլատրվի դեպի այն տանիքները, որոնք պատրաստված են անբավարար ամրության նյութերից, եթե սարքավորում չի տրամադրվում՝ աշխատանքի անվտանգ կատարումն ապահովելու համար:

## 11. Բնական և արհեստական լուսավորությունը

11.1. Յուրաքանչյուր աշխատավայր պետք է ամբողջությամբ ապահովված լինի լույսով այնպես, որ հնարավոր լինի ապահովել՝ այնտեղ գտնվող անձանց առողջության և անվտանգության ապահովման համար բավարար լուսավորություն:

11.2. Աշխատավայրը պետք է հնարավորինս բավարար բնական լույս ստանա և հագեցվի սարքավորումներով՝ հաշվի առնելով կլիմայաբանական պայմանները, ինչպես նաև ունենա համապատասխան արհեստական լուսավորություն՝ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման համար:

11.3. Աշխատավայր ունեցող սենյակներում և անցուղիներում լուսային սարքավորումները պետք է տեղադրվեն այնպես, որ տվյալ լուսային սարքի տեսակը դժբախտ պատահարի ռիսկ չներկայացնի:

11.4. Առավելապես բարձր ռիսկի ենթակա աշխատողների՝ աշխատավայրում արհեստական լուսավորության բացակայության դեպքում, պետք է տեղադրվի համարժեք լուսավորություն ապահովող վթարային լուսավորություն:

11.5. Լուսային սարքավորումները պետք է նախագծված լինեն այնպես, որ ապահովեն օպերատիվ հսկողության տարածքների, պահեստային ելքերի, բեռնման վայրերի և վտանգավոր վայրերի լուսավորությունը:

Երբ աշխատավայրերը զբաղեցված են լինում միայն ժամանակ առ ժամանակ, առաջին պարբերությամբ նախատեսված պարտականությունը սահմանափակվում է աշխատողների ներկա գտնվելու ժամանակահատվածով:

## 12. Պատուհանները և լուսանցքները

12.1. Պատուհանները, լուսանցքները և օդափոխության սարքերը, որոնք պետք է լինեն բաց վիճակում, հարմարեցված կամ ապահով, պետք է նախագծված լինեն այնպես, որ այդ գործողությունները հնարավոր լինի անվտանգ իրականացնել: Դրանք չպետք է տեղադրված

լինեն այնպես, որ աշխատողների համար բաց վիճակում վտանգավոր լինեն: 12.2. Պետք է առանց վտանգի ռիսկի հնարավոր լինի մաքրել պատուհանները և լուսանցքները :

### 13. Դռները և դարպասները

13.1. Դռների և դարպասների դիրքը, թիվը և չափսերը, ինչպես նաև դրանց պատրաստման համար օգտագործված նյութերը պետք է որոշվեն՝ հաշվի առնելով սենյակների կամ տարածքների բնույթը և օգտագործման նպատակը:

13.2. Թափանցիկ դռների վրա պետք է համապատասխան նշում կատարվի տեսանելի բարձրության վրա:

13.3. Երկկողմանի բացվող դռներն ու դարպասները պետք է թափանցիկ լինեն կամ միջաթափանց պանելներ ունենան:

13.4. Բոլոր այն դեպքերում, երբ դռների և դարպասների թափանցիկ կամ կիսաթափանցիկ մակերեսները պատրաստված չեն անվտանգ նյութերից և վտանգ կա, որ աշխատողները կարող են վնասվածք ստանալ դռան կամ դարպասի կոտրվելու հետևանքով, ապա նշված մակերեսները պետք է պաշտպանված լինեն կոտրվելուց:

13.5. Սահող դռները պետք է ապահովված լինեն անվտանգության սարքով՝ գծից անսպասելի դուրս գալը կամ վայր ընկնելը կանխելու համար:

13.6. Առաջ բացվող դռներն ու դարպասները պետք է ապահովված լինեն համապատասխան մեխանիզմով՝ դրանք անսպասելիորեն հետ ընկնելուց պաշտպանելու համար:

13.7. Պահեստային ելքերի դռների վրա պետք է համապատասխան նշում կատարվի:

Դրանք պետք է հնարավոր լինի բացել ներսից ցանկացած ժամանակ առանց հատուկ աջակցության:

Պետք է հնարավոր լինի բացել դռները, երբ աշխատավայրերը զբաղեցված են:

13.8. Հատկապես տրանսպորտային փոխադրամիջոցների երթևեկության համար նախատեսված ցանկացած դարպասին անմիջականորեն հարող տարածքում պետք է տեղադրվեն դռներ՝ հետիոտների համար, եթե հետիոտնի համար անվտանգ չէ դրանց միջով անվտանգ անցնելը. այդպիսի դռների վրա պետք է հստակ նշում կատարվի և դրանք պետք է մշտապես զերծ լինեն խոչընդոտներից:

13.9 Մեխանիկական դռներն ու դարպասները պետք է աշխատեն այնպես, որ աշխատողների համար չառաջացնեն դժբախտ պատահարի որևէ ռիսկ:

Դրանք պետք է ապահովված լինեն հեշտ նկատելի և հասանելի վթարային անջատման սարքով, եթե դրանք ինքնաշխատ չեն բացվում հոսանքազրկման ժամանակ, պետք է հնարավոր լինի նաև դրանք ձեռքով բացել:

13.10 Երբ շղթաներ կամ նմանատիպ սարքեր են օգտագործվում մուտքը դեպի ցանկացած վայր փակելու համար, ապա դրանք պետք է պարզ տեսանելի և պատշաճ նկատելի լինեն՝ արգելքի կամ զգուշացման նշանների միջոցով:

#### 14. Երթուղիները

14.1. Պետք է հնարավոր լինի անվտանգ մուտք գործել աշխատավայրեր և արտակարգ իրավիճակներում դրանք արագ ու ապահով լքել :

14.2. Երթուղիները, այդ թվում՝ աստիճանները, ամրակցված սանդուղքները, բեռնահարթակները և թեքահարթակները պետք է հաշվարկվեն, չափագրվեն և տեղադրվեն՝ ապահովելու համար հետիոտների կամ փոխադրամիջոցների ազատ, անվտանգ և պատշաճ մուտքի հնարավորությունն այնպես, որ չվտանգեն երթուղիների մոտակայքում գտնվող աշխատողներին:

14.3. Հետիոտների և (կամ) ապրանքների տեղաշարժի համար նախատեսված անցուղիները պետք է չափագրվեն՝ հնարավոր օգտագործողների թվին և ձեռնարկության տեսակին համապատասխան:

Երթուղիներում տրանսպորտային միջոցներ օգտագործելու դեպքում, հետիոտներին պետք է հատկացվի բավականաչափ անվտանգ բաց տարածություն:

14.4. Բավականաչափ բաց տարածություն պետք է թողնվի փոխադրամիջոցների երթուղիների և դռների, դարպասների, հետիոտնային անցուղիների, միջանցքների ու սանդուղքների միջև:

14.5. Երթուղիները և մուտքի անցուղիները պետք է հստակ որոշվեն՝ աշխատողների պաշտպանության համար:

#### 15. Վտանգավոր տարածքները

15.1. Եթե աշխատավայրը ներառում է վտանգավոր տարածքներ, որտեղ, աշխատանքի բնույթից ելնելով, առկա են վտանգի ռիսկեր, այդ թվում՝ աշխատողներին սպառնացող

վտանգի ռիսկեր կամ ընկնող առարկաներ, ապա այդ վայրերը հնարավորինս պետք է հագեցված լինեն՝ դեպի այդ տարածքներ ոչ իրավասու աշխատողների մուտքը կանխարգելող սարքերով:

15.2. Պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ կանխելու համար ոչ իրավասու աշխատողների մուտքը վտանգավոր տարածքներ:

15.3. Վտանգավոր տարածքները պետք է հստակ մատնանշվեն:

16. Սենյակների չափսերը, օդային տարածությունը սենյակներում. աշխատակայանում տեղաշարժվելու ազատությունը

16.1. Աշխատասենյակները պետք է ունենան բավարար մակերեսային տարածք, բարձրություն և օդային տարածություն՝ թույլ տալու համար աշխատողներին կատարել իրենց աշխատանքն առանց իրենց անվտանգությանը, առողջությանը կամ բարեկեցությանը սպառնացող ռիսկերի: 16.2. Աշխատակայանում չգբաղեցված տարածության չափսերը պետք է այնպիսին լինեն, որ հնարավոր լինի աշխատողների՝ ազատ տեղաշարժվելու բավարար ազատությունը և նրանց իրենց աշխատանքն անվտանգ կատարելու հնարավորություն տրվի :

17. Հանգստի սենյակներ

17.1. Ելնելով աշխատողների անվտանգության կամ առողջության, մասնավորապես՝ իրականացվող գործունեության տեսակից կամ ավելի քան որոշակի թվով աշխատողների առկայությունից՝ աշխատողները պետք է ապահովվեն հասանելի հանգստի սենյակներով:

Սույն դրույթը չի կիրառվում, եթե աշխատողները գրասենյակներում կամ նմանատիպ աշխատանքային սենյակներում են աշխատում, որոնք ապահովում են համարժեք հանգստով ընդմիջումների ժամանակ:

17.2. Հանգստի սենյակները պետք է լինեն բավականին ընդարձակ և հագեցված լինեն համապատասխան թվով սեղաններով, հենակներ ունեցող նստատեղերով՝ աշխատողների թվին համապատասխան:

17.3. Հանգստի սենյակներում պետք է ներդրվեն համապատասխան միջոցներ՝ ծխախոտի ծխով պատճառված անհարմարությունից չծխողներին պաշտպանելու համար:

17.4. Աշխատանքի պարբերական և հաճախակի ընդհատումների և հանգստի սենյակի բացակայության դեպքում, պետք է տրամադրվեն այլ սենյակներ, որտեղ աշխատողները

կարող են մնալ նման ընդհատումների ժամանակ, եթե դա անհրաժեշտ է՝ աշխատողների անվտանգության կամ առողջության համար:

Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ծխախոտի ծխով պատճառված անհարմարությունից չծխողներին պաշտպանելու համար:

## 18. Բացօթյա աշխատավայրեր

18.1. Բացօթյա աշխատակայանները, երթուղիները և մյուս տարածքները կամ կայանքները, որոնք օգտագործվում կամ զբաղեցված են աշխատողների կողմից իրենց գործունեությունն իրականացնելիս, պետք է կազմակերպված լինեն այնպես, որ հետիոտները և փոխադրամիջոցները կարողանան անվտանգ տեղաշարժվել:

18.2. Բացօթյա աշխատավայրերը պետք է լուսավորվեն բավարար արհեստական լուսավորությամբ, եթե ցերեկային լույսը բավարար չէ:

18.3. Եթե աշխատողներն աշխատում են բացօթյա աշխատակայաններում, ապա նման աշխատակայանները հնարավորինս պետք է կազմակերպված լինեն այնպես, որ աշխատողները՝

ա) պաշտպանված լինեն եղանակային խիստ անբարենպաստ պայմաններից և, անհրաժեշտության դեպքում՝ ընկնող առարկաներից,

բ) չենթարկվեն ո՛չ աղմուկի վնասակար մակարդակներին, ո՛չ էլ արտաքին վնասակար ազդեցություններին, ինչպիսիք են գազը, գոլորշին կամ փոշին,

գ) կարողանան արագորեն լքել իրենց աշխատակայանները վտանգի առկայության դեպքում կամ կարողանան արագ աջակցություն ստանալ,

դ) չսայթաքեն կամ վայր չընկնեն:

## 19. Հղի կանայք և կրծքով կերակրող մայրերը

Հղի կանայք և կրծքով կերակրող մայրերը պետք է համապատասխան պայմաններում հանգստի նպատակով պառկելու հնարավորություն ունենան:

## 20. Ֆիզիկական արատ ունեցող աշխատողները

Անհրաժեշտության դեպքում, աշխատավայրերը պետք է կազմակերպվեն այնպես, որ հաշվի առնվեն ֆիզիկական արատ ունեցող աշխատողներին:

Սույն դրույթը կիրառվում է, մասնավորապես, ֆիզիկական արատ ունեցողների կողմից ուղղակիորեն օգտագործվող կամ զբաղեցված դռների, միջանցքների, աստիճանավանդակների, ցնցուղարանների, լվացարանների, սանհանգույցների և աշխատակայանների նկատմամբ:

## ՄԱՍ Բ

### **Ծովեզերքին մոտ գտնվող գոտիների նկատմամբ կիրառելի հատուկ նվազագույն պայմաններ**

1. Հրդեհի բացահայտումը և հրդեհամարումը

1.1. Երբ աշխատավայրերը նախագծված են, կառուցված են, հագեցված են սարքավորումներով, շահագործման են հանձնված, գործում են կամ պահպանվում, ապա համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ անվտանգության և առողջության փաստաթղթում նշված աղբյուրներից հրդեհի բռնկումն ու տարածումը կանխելու համար:

Արագ ու արդյունավետ հրդեհամարման համար պետք է ընթացակարգ սահմանվի:

1.2. Աշխատավայրերը պետք է հագեցվեն համապատասխան հրդեհամարման սարքավորումներով և, անհրաժեշտության դեպքում, հրդեհի հայտնաբերման ու ազդանշանային համակարգերով:

1.3. Ոչ ինքնաշխատ հրդեհամարման սարքավորումները պետք է լինեն հեշտ հասանելի և օգտագործման տեսանկյունից՝ պարզ, անհրաժեշտության դեպքում՝ վնասից պաշտպանված:

1.4. Հակահրդեհային պաշտպանության պլանը, որում մանրամասնվում են ձեռնարկվելիք նախագգույնական միջոցները՝ սույն Հրահանգի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ հրդեհից պաշտպանվելու, այն հայտնաբերելու և դրա բռնկման ու տարածման դեմ պայքարելու համար, պետք է տեղում փակցված լինի: 1.5. Հրդեհամարման սարքավորումները պետք է 92/58/ԵՏՀ հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով ցույց տրվեն:

Այդպիսի նշանները պետք է տեղադրվեն համապատասխան տեղերում և մշտապես պահպանվեն:

2. Հեռակառավարումն արտակարգ իրավիճակներում



Անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, որոշ սարքավորումներ պետք է հնարավոր լինեն օգտագործվել հեռակառավարման միջոցով համապատասխան վայրերում՝ արտակարգ իրավիճակների դեպքում:

Նման սարքավորումները պետք է ներառեն ջրհորների, կայանների և խողովակների առանձնացման և համակարգեր:

### 3. Հեռահաղորդակցություն, սովորական և արտակարգ իրավիճակներ

3.1. Անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, յուրաքանչյուր աշխատավայր, որտեղ ներկա են աշխատողները, պետք է ապահովված լինեն՝

ա) ձայնային և օպտիկական համակարգով, որի միջոցով, անհրաժեշտության դեպքում, ահազանգը փոխանցվում է աշխատավայրի բոլոր՝ մարդկանցով զբաղեցված հատվածներ:

բ) ձայնային համակարգ, որը կարող է հստակ լսելի լինել կայանքի բոլոր այն հատվածներում, որտեղ աշխատողները հաճախ ներկա են:

3.2. Համապատասխան վայրերում պետք է նախատեսվեն ահազանգ կատարելու սարքեր:

3.2. Երբ աշխատողները ներկա են այնպիսի աշխատավայրերում, որոնք սովորաբար զբաղեցված չեն մարդկանցով, նրանց տրամադրության տակ պետք է լինեն հեռահաղորդակցման համապատասխան համակարգեր:

### 4. Ապահով հավաքակետ և ներկա գտնվող անձանց ցուցակ

Անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, պետք է սահմանել ապահով հավաքակետ, վարել ներկա գտնվող անձանց ցուցակներ և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել:

### 5. Տարհանման և փախուստի միջոցներ

5.1. Արտակարգ իրավիճակներում համապատասխան գործողություններ ձեռնարկելու շուրջ աշխատողները պետք է վերապատրաստվեն:

5.2. Փրկարարական սարքավորումները պետք է տրամադրվեն հեշտությամբ մատչելի և պատշաճ տեղակայված վայրերում ու պատրաստ լինեն օգտագործման համար:

5.3. Երբ պահեստային ելքերը դժվար հասանելի են, և երբ առկա է կամ կարող է առկա լինել շնչելն անհնար դարձնող միջավայր, պետք է տրամադրվի փախուստի համար

նախատեսված ինքնաշխատ սարքավորում՝ աշխատակայանում հրատապ օգտագործման համար:

## 6. Անվտանգության ապահովման վարժանքներ

Անվտանգության ապահովման վարժանքներ պետք է անցկացվեն պարբերական ժամանակահատվածներով բոլոր աշխատավայրերում, որտեղ սովորաբար ներկա են աշխատողները:

Նման վարժանքների հիմնական նպատակը այն աշխատողների հմտությունները վարժեցնելն ու ստուգելն է, ում վերապահված են որոշակի պարտականություններ արտակարգ իրավիճակներում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների համար նախատեսված սարքավորումներն օգտագործելը, կառավարելը կամ գործարկելը՝ հաշվի առնելով 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթում նշված չափորոշիչները:

Անհրաժեշտության դեպքում, այն աշխատողները, ում այդպիսի հանձնարարություն է տրվել, նույնպես պետք է վարժանքներ անցնեն այդ սարքավորումների ճիշտ օգտագործման, կառավարման կամ գործարկման վերաբերյալ:

## 7. Սանիտարական սարքավորումները

### 7.1. Հանդերձասենյակները և պահարանները

7.1.1. Աշխատողներին պետք է տրամադրվեն համապատասխան հանդերձասենյակներ, եթե նրանք պետք է կրեն հատուկ աշխատանքային համազգեստ և եթե, առողջության կամ էթիկայի նկատառումներից ելնելով, նրանք չեն կարող հանդերձափոխվել մեկ այլ սենյակում:

Հանդերձասենյակները պետք է լինեն հեշտ հասանելի, բավականաչափ տարողունակ և ունենան նստատեղեր:

7.1.2. Հանդերձասենյակները պետք է լինեն բավականաչափ ընդարձակ և ունենան հարմարություններ՝ հնարավորություն տալու համար յուրաքանչյուր աշխատողին իր հագուստն աշխատանքային ժամերին կողպեքով փակվող տեղում պահել:

Հանգամանքներից ելնելով (օրինակ՝ վտանգավոր նյութեր, խոնավություն, աղբ)՝ աշխատանքային համազգեստի համար նախատեսված պահարանները պետք է առանձնացված լինեն սովորական հագուստի համար նախատեսված պահարաններից:

Պետք է նախատեսվի դրույթ՝ հնարավորություն տալու համար չորացնել թաց աշխատանքային համազգեստը:

7.1.3. Անհրաժեշտ է նախատեսել դրույթ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին հանդերձասենյակներ կամ միևնույն հանդերձասենյակի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

7.1.4. Եթե 7.1.1 կետի համաձայն հանդերձասենյակներ չեն պահանջվում, ապա յուրաքանչյուր աշխատողի պետք է տեղ հատկացնել՝ իր հագուստը պահելու համար:

## 7.2. Ցնցուղարանները և լվացարանները

7.2.1. Աշխատողներին պետք է ապահովել համապատասխան և հարմարեցված ցնցուղարաններով, եթե դա պահանջվում է՝ աշխատանքի բնույթից կամ առողջության նկատառումներից ելնելով:

Անհրաժեշտ է նախատեսել դրույթ՝ տղամարդկանց և կանանց համար ցնցուղարանի առանձին սենյակներ կամ ցնցուղարանի միևնույն սենյակի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

7.2.2. Ցնցուղարանի սենյակները պետք է բավականաչափ ընդարձակ լինեն՝ հիգիենայի համարժեք պայմաններում առանց դժվարությունների լողանալու համար:

Լոգասենյակները պետք է ապահովված լինեն հոսող տաք և սառը ջրով:

7.2.3. Եթե 7.2.1 կետի առաջին ենթապարբերությամբ ցնցուղարանի առկայությունը չի պահանջվում, ապա պետք է աշխատակայանների և հանդերձասենյակների մոտակայքում նախատեսել տաք և սառը հոսող ջրով ապահովված համապատասխան ու հարմարեցված լվացարաններ:

Այդ լվացարանները պետք է տղամարդկանց և կանանց համար նախատեսվեն առանձին կամ նրանց կողմից առանձին օգտագործվեն՝ էթիկայի հիմքերից ելնելով:

7.2.4. Եթե ցնցուղարաններով կամ լվացարաններով ապահովված սենյակներն առանձնացված են հանդերձասենյակից, ապա այդ երկուսի միջև պետք է դուրսին կապուղի ապահովել:

## 7.3. Զուգարանները և լվացարանները

Անհրաժեշտ է նախատեսել առանձին հարմարություններ՝ բավարար թվով զուգարանակոնքերով և լվացարաններով՝ աշխատակայանների, հանգստի սենյակների, հանդերձասենյակների և ցնցուղարաններով ու լվացարաններով ապահովված սենյակների մոտակայքում:

Անհրաժեշտ է նախատեսել դրոյթ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին զուգարաններ կամ միևնույն զուգարանից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

## 8. Առաջին օգնության համար նախատեսված սենյակներ և սարքավորումներ

8.1. Առաջին օգնության համար նախատեսված սարքավորումները պետք է համապատասխան լինեն իրականացվող գործունեության տեսակին:

Պետք է տրամադրվեն առաջին օգնության համար նախատեսված մեկ կամ ավելի սենյակներ:

Այդ սենյակներում պետք է ցուցադրված լինեն՝ արտակարգ իրավիճակների դեպքում առաջին օգնության վերաբերյալ հստակ տեսանելի ցուցումներ: 8.2. Առաջին օգնության համար նախատեսված սենյակները պետք է հագեցված լինեն առաջին օգնության համար նախատեսված կարևոր սարքավորումներով և սարքերով, ինչպես նաև դյուրամատչելի լինեն պատգարակների համար:

Դրանք պետք է նախատեսվեն 92/58/ԵՏՀ հրահանգն օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված ցուցանշանների միջոցով:

8.3. Բացի դրանից՝ առաջին օգնության համար նախատեսված սարքավորումներ պետք է տեղադրված լինեն բոլոր այն վայրերում, որտեղ աշխատանքային պայմաններից ելնելով, դա պահանջվում է:

Այդ սարքավորումների վրա պետք է համապատասխան նշումներ լինեն և դրանք պետք է մատչելի լինեն :

8.4. Բավարար թվով աշխատողներ պետք է վերապատրաստվեն՝ տրամադրվող առաջին օգնության համար նախատեսված սարքավորումների օգտագործման շուրջ:

## 9. Երթուղիները

Երբ փոխադրամիջոցները մուտք են գործում աշխատավայր, ապա, անհրաժեշտության դեպքում, պետք է սահմանվեն երթևեկության կանոնակարգեր:

## ՄԱՍ Գ

### Ծովեզերքից հեռու գտնում կիրառելի հատուկ նվազագույն պայմանները

#### 1. Նախնական դիտարկումը

1.1. Չհակասելով 3(2) հոդվածին՝ գործատուն, ով ազգային օրենսդրության և (կամ) ազգային գործելակերպի համաձայն, պատասխանատու է Գ մասով կարգավորվող աշխատավայրի համար, պետք է ապահովի, որ անվտանգության և առողջության փաստաթղթով նախատեսվի, որ համապատասխան բոլոր միջոցները ձեռնարկվել են՝ աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության համար, ինչպես սովորական, այնպես էլ ծայրահեղ իրավիճակներում:

Այդ նպատակով, փաստաթղթով պետք է՝

ա) սահմանել աշխատավայրի հետ կապված վտանգի հատուկ աղբյուրները՝ ներառյալ ցանկացած զուգահեռաբար իրականացվող գործողություն, որի հետևանքով պատահարները կարող են տվյալ աշխատողների անվտանգության և առողջության համար լուրջ հետևանքներ առաջացնել:

բ) գնահատել «ա» կետում նշված վտանգի հատուկ աղբյուրներում պարունակվող ռիսկերը,

գ) ցույց տալ, որ համապատասխան նախազգուշացումներ են կատարվել «ա» կետում նշված պատահարներից խուսափելու, պատահարների տարածումը սահմանափակելու և աշխատավայրում, արտակարգ իրավիճակների դեպքում, արդյունավետ և հսկվող տարհանման իրականացումը թույլատրելու համար,

դ) ցույց տալ, որ կառավարման համակարգը համապատասխանում է 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներին և սույն Հրահանգին, ինչպես սովորական, այնպես էլ ծայրահեղ իրավիճակներում:

1.2. Գործատուն հետևում է ընթացակարգերին և կարգավորումներին, որոնք սահմանված են անվտանգության և առողջության փաստաթղթում սույն Հրահանգով կարգավորվող բոլոր համապատասխան փուլերը նախազօծելու և իրագործելու ընթացքում:

1.3. Տարբեր գործատուներ, ովքեր պատասխանատու են տարբեր աշխատավայրերի համար, պետք է, անհրաժեշտության դեպքում, համագործակցեն անվտանգության և առողջության փաստաթղթերը կազմելիս և աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելիս:

## 2. Հրդեհի հայտնաբերումը և հրդեհամարումը

2.1. Անվտանգության և առողջության փաստաթղթի 1.1-ում նշված համապատասխան նախազգուշացումները պետք է ձեռնարկվեն հրդեհից պաշտպանելու, այն հայտնաբերելու և դրա բռնկման ու տարածման դեմ պայքարելու համար:

Պետք է հարկ եղած դեպքում տրամադրել հակահրդեհային պատեր՝ հրդեհի ռիսկայնություն ունեցող տարածքներն առանձնացնելու համար:

2.2. Հրդեհի հայտնաբերման և հակահրդեհային պաշտպանության համապատասխան համակարգերը, հրդեհամարման համակարգերը և ազդանշանային սարքերը պետք է տրամադրվեն բոլոր աշխատավայրերում՝ 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով սահմանված ռիսկերի համաձայն:

Դրանք կարող են ներառել, սակայն չսահմանափակվել՝

- հրդեհի հայտնաբերման համակարգերով,
- հրդեհի ազդանշանային սարքերով
- հակահրդեհային ջրային համակարգերով,
- հրշեջ կռուներով և ճկափողերով,
- ջրալցման համակարգով և ջրային մոնիտորներով
- մեխանիկական ջրացայտ համակարգերով,
- հրդեհամարման գազային համակարգերով,
- փրփուրային համակարգերով,
- շարժական հրամարիչներով
- հրշեջի սարքավորումներով:

2.3. Ոչ ինքնաշխատ հակահրդեհային սարքավորումները պետք է լինեն հեշտ հասանելի, օգտագործման տեսանկյունից՝ պարզ և, անհրաժեշտության դեպքում, վնասից պաշտպանված:

2.4. Հակահրդեհային պաշտպանության պլանը, որի մեջ մանրամասն ներկայացվում են նախազգուշական միջոցները՝ հրդեհից պաշտպանելու, այն հայտնաբերելու և դրա բռնկման ու տարածման դեմ պայքարելու համար, պետք է պահվի աշխատավայրում:

2.5. Արտակարգ իրավիճակների համակարգերը պետք է առանձնացվեն կամ այլ կերպ պաշտպանվեն պատահարներից այնքանով, որքանով անհրաժեշտ է՝ արտակարգ իրավիճակում արտակարգ գործառույթների իրականացումն ապահովելու համար:

Նման համակարգերը պետք է, հարկ եղած դեպքում, կրկնօրինակվեն:

2.6. Սարքավորումները պետք է ցույց տրվեն 92/58/ԵՏՀ հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով:

Այդ նշանները պետք է տեղադրվեն համապատասխան վայրերում և մշտապես պահվեն:

### 3. Հեռակառավարումն արտակարգ իրավիճակներում

3.1. 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, արտակարգ իրավիճակների համար պետք է հեռակառավարման համակարգ տեղադրվի:

Այդ համակարգը համապատասխան վայրերում պետք է ընդգրկի դիտանցման կայաններ, որոնք կարող են օգտագործվել արտակարգ իրավիճակների դեպքում, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, դիտանցման կայաններ՝ անվտանգ հավաքակետերում և տարհանման կայաններում:

3.2. Հեռակառավարման հնարավորություն ունեցող սարքավորումները, ինչպես նշված է 3.1 կետում, պետք է առնվազն ընդգրկեն օդափոխության, հնարավոր բռնկում առաջացնող սարքերի անհապաղ անջատման, դյուրավառ հեղուկների և գազերի արտահոսքի կանխարգելման, հակահրդեհային պաշտպանության և հորերի շահագործման հսկողության համակարգեր:

### 4. Հեռահաղորդակցություն. սովորական և արտակարգ իրավիճակներ

4.1. 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, յուրաքանչյուր աշխատավայր, որտեղ ներկա են աշխատողներ, պետք է ապահովված լինի՝

– ձայնային և օպտիկական համակարգով, որը հնարավորություն է տալիս, անհրաժեշտության դեպքում, ահազանգը փոխանցել աշխատավայրի՝ մարդկանցով զբաղեցված բոլոր հատվածները,

– ձայնային համակարգով, որը հնարավորություն ունի հստակ լսելի լինելու կայանքի բոլոր այն հատվածներում, որտեղ հաճախ ներկա են աշխատողները,

–համակարգով, որը հնարավորություն է տալիս հեռահաղորդակցություն ապահովել ավիապաշտպան և փրկարարական ծառայությունների հետ:

4.2. Նման համակարգը պետք է իրավիճակներում գործելու հնարավորություն ունենա:

Ձայնային համակարգը պետք է լրացվի հեռահաղորդակցման համակարգերով, որոնք խոցելի հոսանքի սնուցման աղբյուրներից օգտվելու համար հուսալի չեն:

4.3. Պետք է համապատասխան վայրերում տեղադրվեն ահազանգման հարմարություններ:

4.4. Երբ աշխատողները ներկա են այնպիսի աշխատավայրերում, որոնք սովորաբար զբաղեցված չեն մարդկանցով, պետք է ըստ համապատասխան հանգամանքների տրամադրվեն հաղորդակցության համակարգեր:

5. Ապահով հավաքակետ և ներկա գտնվող անձանց ցուցակ

5.1. Համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ տարիանման կետերը և անվտանգ հավաքակետերը ջերմությունից, ծխից և հնարավորինս պայթյունի հետևանքներից պաշտպանելու համար ու ապահովել, որ դեպի տարիանման կետեր և անվտանգ հավաքակետեր տանող և դրանցից դուրս եկող պահեստային ելքերն անցանելի լինեն:

Այդ միջոցները պետք է այնպիսին լինեն, որ պաշտպանություն տրամադրեն աշխատողներին բավարար ժամանակահատվածում՝ անվտանգ տարիանում և, անհրաժեշտության դեպքում, փախուստի և փրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար:

5.2. 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով պահանջվելու դեպքում, 5.1 կետով նախատեսված պաշտպանության վայրերից մեկում պետք է տրամադրվեն համապատասխան հարմարություններ՝ Գ մասի 3–րդ կետով նախատեսված սարքավորումների հեռակառավարումը և ավիապաշտպան ու արտակարգ իրավիճակների ծառայությունների շրջանակներում հաղորդակցությունն ապահովելու համար:

5.3. Անվտանգ հավաքակետերը և տարիանման կետերը պետք է հեշտ հասանելի լինեն կացարանից ու աշխատանքային վայրերից:

5.4. Յուրաքանչյուր առանձին անվտանգ հավաքակետի դեպքում պետք է թարմացվի և ցուցադրվի այն աշխատողների անվանացանկը, ովքեր նշանակվել են տվյալ անվտանգ հավաքակետում:



5.5. Արտակարգ իրավիճակների դեպքում հատուկ պարտականություններ ունեցող անձանց անվանացանկը պետք է տրամադրվի և ցուցադրվի աշխատավայրի համապատասխան տեղերում:

Ա մասի 3.6 կետով նախատեսված գրավոր ցուցումներում պետք է նշվեն նրանց անունները:

## 6.Տարհանման և փախուստի միջոցներ

6.1. Աշխատողները պետք է վերապատրաստվեն՝ արտակարգ իրավիճակներում համապատասխան գործողություններ ձեռնարկելու շուրջ:

Ի հավելումն արտակարգ իրավիճակների ընդհանուր վերապատրաստումների՝ աշխատողները պետք է անցնեն այդ աշխատավայրին հատուկ վերապատրաստում, որը պետք է նախատեսվի աշխատավայրին վերաբերող 1.1 կետով սահմանված անվտանգության և առողջության փաստաթղթով:

6.2. Աշխատողները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն ողջ մնալու տեխնիկայի վերաբերյալ՝ հաշվի առնելով 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով սահմանված չափորոշիչները:

6.3. Յուրաքանչյուր աշխատավայրում պետք է տրամադրվեն համապատասխան և բավարար տարհանման միջոցներ՝ արտակարգ իրավիճակների համար և ուղղակիորեն դեպի ծով տանող փախուստի միջոցներ:

6.4. Պետք է կազմվի ծովային փրկարարական միջոցների և աշխատավայրից տարհանման իրավիճակների համար արտակարգ իրավիճակների գործողության պլան:

Պլանը, որը պետք է հիմնված լինի 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթի վրա, պետք է նախատեսի պահեստային ռեժիմում գտնվող նավերի ու ուղղաթիռների օգտագործման հնարավորությունը և նավերի ու ուղղաթիռների հզորության և արձագանքման ժամանակի վերաբերյալ չափորոշիչներ ընդգրկի :

Յուրաքանչյուր կայանքի համար անվտանգության և առողջության փաստաթղթով պետք է անհրաժեշտ արձագանքման ժամանակ նախատեսվի:

Պահեստային ռեժիմում գտնվող նավերը պետք է նախագծված լինեն և հագեցված լինեն սարքավորումներով՝ տարհանման և փրկարարական գործողությունների պահանջները բավարարելու համար:

6.5. Յուրաքանչյուր փրկամակույկի, փրկարարական լաստի, փրկօղակի և փրկարարական բաճկոնի համար նախատեսված նվազագույն պահանջները հետևյալն են՝

-դրանք պետք է լինեն հարմարեցված և սարքավորումներով հագեցված՝ բավարար ժամանակով կյանքը պահպանելու համար, –դրանք պետք է առկա լինեն բավարար թվով՝ բոլոր աշխատողների հավանական ներկա գտնվելու հաշվարկով,

–դրանք պետք է համապատասխան լինեն աշխատավայրին,

–դրանք պետք է պատշաճորեն պատրաստված լինեն համապատասխան նյութերից՝ հաշվի առնելով կյանքը փրկելու իրենց գործառույթը և այն հանգամանքները, որոնցում դրանք կարող են օգտագործվել և պահվել օգտագործման համար պատրաստ վիճակում, և

–դրանք պետք է այնպիսի գույն ունենան, որ տեսանելի լինեն օգտագործման ժամանակ և հագեցած լինեն այնպիսի սարքերով, որոնք օգտագործողը կարող է կիրառել՝ փրկարարների ուշադրությունը գրավելու համար:

6.6. Համապատասխան փրկարարական գործիքները պետք է անմիջական օգտագործման համար հասանելի լինեն:

## 7. Անվտանգության վարժանքներ

Բոլոր այն աշխատավայրերում, որտեղ սովորաբար աշխատողները ներկա են լինում, պետք է պարբերաբար ժամանակահատվածներով անցկացվեն անվտանգության վարժանքներ, որոնց ժամանակ՝

–բոլոր այն աշխատողները, ում վրա դրվել են հատուկ պարտականություններ, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների համար նախատեսված սարքավորումների օգտագործումը, կառավարումը կամ գործարկումը, անցնում են վերապատրաստում և ստուգում՝ այդ պարտականությունների կատարման մասով՝ հաշվի առնելով 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով սահմանված չափորոշիչները:

Անհրաժեշտության դեպքում, աշխատողները ևս պետք է անցնեն վարժանքներ նման սարքավորումների ճիշտ օգտագործման, կառավարման կամ գործարկման շուրջ:

–վարժանքների ժամանակ օգտագործվող արտակարգ իրավիճակների համար նախատեսված բոլոր սարքավորումները ստուգվում են, մաքրվում և, հարկ եղած դեպքում, լիցքավորվում են կամ փոխարինվում, և բոլոր դյուրակիր սարքավորումներն այդպես

օգտագործվելուց հետո վերադարձվում են այն տեղը, որտեղ դրանք սովորաբար պահվում են,

–փրկարարական լաստերը ստուգվում են գործածության համար:

## 8. Սանիտարական հարմարությունները

### 8.1. Հանդերձասենյակները և պահարանները

8.1.1. Աշխատողներին պետք է ապահովել համապատասխան հանդերձասենյակներով, եթե նրանք պետք է կրեն հատուկ աշխատանքային համազգեստ և եթե, առողջության կամ պարկեշտության նկատառումներից ելնելով, նրանք չեն կարող հանդերձափոխվել այլ սենյակներում:

Հանդերձասենյակները պետք է լինեն հեշտ հասանելի, բավականաչափ տարողունակ և ունենան նստատեղեր:

8.1.2. Հանդերձասենյակները պետք է լինեն բավականաչափ ընդարձակ և ունենան հարմարություններ՝ հնարավորություն տալու համար յուրաքանչյուր աշխատողի իր հագուստն աշխատանքային ժամերին կողպեքով փակվող տեղում պահել:

Հանգամանքներից ելնելով (օրինակ՝ վտանգավոր նյութեր, խոնավություն, աղբի առկայություն), հագուստի համար նախատեսված պահարանները պետք է առանձնացված լինեն սովորական հագուստի համար նախատեսված պահարաններից:

Պետք է նախատեսվի դրոյթ՝ հնարավորություն տալու համար չորացնել թաց աշխատանքային համազգեստը:

8.1.3. Պետք է նախատեսել դրոյթ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին հանդերձասենյակներ կամ միևնույն հանդերձասենյակի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

8.1.4. Եթե 8.1.1 կետով չի պահանջվում հանդերձասենյակների առկայությունը, ապա յուրաքանչյուր աշխատողի անհրաժեշտ է տեղ հատկացնել՝ իր հագուստը պահելու համար:

### 8.2. Ցնցուղարանները և լվացվելու հարմարությունները

Ի լրումն այն հարմարությունների, որոնք տրամադրվում են ցանկացած կացարանային տարածքում, անհրաժեշտության դեպքում, աշխատակայանների մոտակայքում պետք է տրամադրվեն ցնցուղարաններ և լվացվելու հարմարություններ:

### 8.3. Չուգարանները և լվացարանները

Ի լրումն այն հարմարությունների, որոնք տրամադրվում են ցանկացած կացարանում, անհրաժեշտության դեպքում, պետք է աշխատակայանների մոտակայքում տրամադրվեն զուգարաններ և լվացարաններ:

Անհրաժեշտ է նախատեսել դրույթ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին զուգարաններ կամ միևնույն զուգարանից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

### 9. Առաջին օգնության համար նախատեսված սենյակներ և սարքավորումներ

9.1. Առաջին օգնության համար նախատեսված մեկ կամ ավելի սենյակներ պետք է տրամադրվեն ըստ կայանքի չափերի կամ իրականացվող գործունեության տեսակի:

9.2. Առաջին օգնության համար նախատեսված սենյակները պետք է ունենան համապատասխան սարքավորումներ, հարմարություններ և դեղորայք ու բավարար թվով մասնագիտացված աշխատողներ՝ ըստ հանգամանքների առաջին օգնություն ցույց տալու համար կամ, անհրաժեշտության դեպքում՝ գրանցված բուժաշխատողի (ով կարող է ներկա լինել կամ չլինել) կողմից վերահսկողությամբ բուժում իրականացնելու համար:

Դրանք պետք է նախատեսվեն 92/58/ԵՏՀ հրահանգն օրենք փոխատեղող ազգային կանոններով սահմանված ցուցանշանների միջոցով:

9.3. Բացի դրանից՝ առաջին օգնության սարքավորումները պետք է մատչելի լինեն բոլոր այն վայրերում, որտեղ պահանջում են աշխատանքային պայմանները:

Այդ սարքավորումները պետք է համապատասխանաբար նախատեսվեն ցուցանշանների միջոցով և հեշտ հասանելի լինեն:

### 10. Կացարան

10.1. Գործողությունների բնույթից, մասշտաբից և տևողությունից ելնելով՝ գործատուն պետք է աշխատողներին նաև կացարան տրամադրի, որը պետք է՝

– համապատասխանաբար պաշտպանված լինի պայթյունի ազդեցությունից, ծխի ու գազի ներթափանցումից և հրդեհի բռնկումից ու տարածումից, ինչպես սահմանված է 1.1 կետով նախատեսված անվտանգության և առողջության փաստաթղթով,

–համապատասխանաբար հագեցած լինի օդափոխության, ջեռուցման և լուսավորման հարմարություններով,

–յուրաքանչյուր մակարդակում ապահովված լինի առնվազն 2 առանձին մուտքերով, որոնք տանում են դեպի պահեստային ելքեր,

–պաշտպանված լինի այլ տարածքներից եկող աղմուկից, հոտից և ծխից, որոնք կարող են վնասակար լինել առողջության համար, և՛ վատ եղանակից,

–առանձնացված լինի ցանկացած աշխատակայանից և տեղակայված լինի վտանգավոր տարածքներից հեռու:

10.2. Նման կացարաններում պետք է լինեն բավականաչափ մահճակալներ կամ մահճիկներ՝ կայանքում գիշերող աշխատողների թվին համապատասխան:

Ցանկացած սենյակում, որը նախատեսված է որպես գիշերելու կացարան, պետք է բավականաչափ տարածք լինի այն զբաղեցնող անձանց համար՝ հագուստը պահելու համար:

Առանձին գիշերելու սենյակներ պետք է տրամադրվեն տղամարդկանց և կանանց համար:

10.3. Նման կացարանը պետք է ներառի բավարար թվով ցնցուղարաններ և լվացվելու հարմարություններ՝ հագեցված տաք ու սառը հոսող ջրով:

Անհրաժեշտ է նախատեսել դրոյթ՝ տղամարդկանց և կանանց համար ցնցուղարանի առանձին սենյակներ կամ ցնցուղարանի միևնույն սենյակի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

Ցնցուղարանները պետք է բավականաչափ ընդարձակ լինեն՝ թույլ տալու համար յուրաքանչյուր աշխատողի անարգել լվացվել ճիշտ հիգիենիկ պայմաններում:

10.4. Կացարանը պետք է հագեցված լինի բավարար թվով զուգարաններով և լվացարաններով:

Անհրաժեշտ է նախատեսել դրոյթ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին հարմարություններ և կամ միևնույն հարմարություններից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

10.5. Կացարանը և դրա սարքավորումները պետք է պահպանվեն հիգիենայի համապատասխան ստանդարտների համաձայն:

## 11. Ուղղաթիռով կատարվող գործողություններ

11.1. Աշխատավայրերում ուղղաթիռի թռիչքային հարթակը պետք է ունենա բավարար չափսեր և տեղակայված լինի այնպես, որ ապահովվի հստակ մուտքը՝ հնարավորություն տալու համար ամենամեծ չափսեր ունեցող ուղղաթիռով թռիչքային հարթակի օգտագործմամբ գործել ամենախիստ պայմաններում, որոնք նախատեսված են ուղղաթիռով կատարվող գործողությունների համար:

Ուղղաթիռի թռիչքային հարթակը պետք է ունենա այնպիսի ձև և կառուցվածք, որ համապատասխան լինի նախատեսված ծառայությանը:

11.2. Ուղղաթիռի վայրէջքի անմիջական մոտակայքում պետք է տեղադրվի և պահպանվի այնպիսի սարքավորում, որի օգտագործման անհրաժեշտությունը կարող է առաջանալ ուղղաթիռի հետ կապված պատահարների ժամանակ:

11.3. Տեղի աշխատուժով համալրված կայանքներում պետք է արտակարգ իրավիճակներին արձագանքելու նպատակով բավարար թվակազմով վերապատրաստված անձնակազմ լինի՝ ուղղաթիռի թռիչքային հարթակում ուղղաթիռի թռիչքի ժամանակ:

## 12. Կայանքների տեղադրումը ծովում. ապահովություն և կայունություն

12.1. Պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգությունն ու առողջությունը վարժանքների միջոցով այն ժամանակ, երբ ծովեզերքից հեռու գտնվող կայանքները տեղադրվում են ծովի մոտ:

12.2. Ծովեզերքից հեռու գտնվող կայանքների տեղադրման նախապատրաստական գործողությունները պետք է կատարվեն այնպես, որ ապահովվեն կայունությունն ու ապահովությունը:

12.3. Օգտագործվող սարքավորումները և ընթացակարգերը 12.1 կետում նշված գործողություններն իրականացնելու համար պետք է այնպիսին լինեն, որ նվազեցնեն հանքարդյունահանող արդյունաբերություններում աշխատողներին սպառնացող ռիսկը՝ վարժանքների միջոցով՝ հաշվի առնելով ինչպես սովորական, այնպես էլ ծայրահեղ իրավիճակների պայմանները: